

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

ՕՐՈՐԱՍԱՍՑԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Օրորոցային տեքստերը /lullaby texts/ ստեղծվում և ավանդվում են բանավոր, հետևաբար բանահյուսական նյութը շրջանառվում ու ծավալվում է բանասաց /ասացող¹ (narrator)-ունկնդիր/լսող (listener) հաղորդակցման շրջանակներում: Ուսումնասիրվող նյութի դեպքում բանասացը մայրն է, մեծ մայրը, դայակը, առանձնահատուկ դեպքերում՝ հայրը, իսկ ունկնդիրը՝ երեխան: Օրորոցային բանահյուսական տեքստ է, ուստի գործում է բանահյուսական տեքստի ստեղծման և ընկալման, մասնավորապես բանասացի և ունկնդրի փոխհարաբերությունների ամբողջական համակարգը:

Օրորոցայինների՝ որպես բանարվեստի ինքնատիպ տեքստերի յուրահատկությունը թելադրվում է նրանով, որ հասցեատերը երեխան է և նրա աշխարհը, իսկ հեղինակը՝ ծնողը, առավելապես երեխային ծնող, խնամող, հոգ տանող կանայք:

Օրորոցայինի՝ որպես տեքստի բնույթը, կառուցվածքը, իմաստային ընդգրկունությունը, ոճական առանձնահատկությունները և գործառույթը պայմանավորված են ունկնդրով, հաճախ էլ օրորասացի հոգեվիճակով: Հետևաբար խիստ կարևոր է օրորոցային տեքստի ուսումնասիրման գործընթաց ընդգրկել ասացող – հասցեատեր գործոնները: Օրորոցային տեքստի հասցեատերը միշտ ունկնդիր երեխան է: Առանձին դեպքերում օրորի տեքստը կարող է ընթերցվել ուսումնասիրող-հետազոտողի կողմից, այս իրադրությունում օրորը փոխում է իր գործառույթը: Այսպես, նման դեպքեր լինում են այն ժամանակ, երբ ուսումնասիրողն է օրորոցային տեքստ գրառում բանասացներից իր հետազոտական աշխատանքները կատարելու համար: Մեր ուսումնասիրության պարագայում ևս ունենք բազմաթիվ գրի առած օրինակներ՝ պատմված բանասացների կողմից:

Տեքստը շարունակ վերամշակվում է, վերստեղծվում և *օրորասաց – մանուկ ունկնդիր/մանուկ ունկնդիր - օրորասաց* փոխակերպումների շղթան անընդհատ ընդլայնվում է:

Օրորասացի կերպարը համարժեք ներկայացնելու համար հարկ ենք համարում խմբավորել և հիշատակել վերջիններիս ավանդական և ոչ ավանդական լինելը: Այսպես, առաջին և երկրորդ խմբերին կարող ենք տալ *ավանդական* բնորոշումը:

Առաջին խումբ - *մայր, մեծ մայր դայակ, քույր*

Երկրորդ խումբ – *ավագ երեխա*

Երրորդ խումբ – *հայր, մեծ հայր*

Ավանդական օրորասացների կողմից ստեղծվող տեքստը մեծ մասամբ պատմվում է առաջին դեմքով և միշտ ոճավորվում է: Եթե տեքստը պատմվում է ոչ

¹ Բանասաց անվանումից բացի, կիրարկվում են «ասացող, պատմող» եզրույթները: «Բանասաց, հեքիաթասաց»-ի նմանությամբ օրորոցային տեքստ պատմողին, ասացողին անվանենք օրորասաց:

ավանդական օրորասացի կողմից, այսպես դարձյալ խոսքը ոճական երանգավորում է ստանում՝ հաճախ ձուլվելով ավանդական օրորասացի խոսքին:

Յուրաքանչյուր օրորասաց կարող է երգել նույն տեքստը ուրույն մոտեցմամբ: Մակայն օրորոցային տեքստերում կան մի շարք կարևոր ցուցիչներ (deictics), որոնք տեղեկատվություն հաղորդող են և գերակա բաղադրիչներ: Օրինակ՝ ժամանակի ցուցիչը՝ այսօր, այս գիշեր, այդ, this, that, բայերի ժամանակային ձևերի ցուցիչները, անձի՝ օրորասացի/ (person deictics) – me, my և ունկնդրի ցուցիչների կիրառումը:

Մեզ համար առավել կարևոր ցուցիչներից կառանձնացնենք օրորերգի տեքստ ասացողին և տեքստ ունկնդրողին. ո՞վ է պատմում տեքստը, ո՞ւմ համար է պատմում, որտե՞ղ և ե՞րբ են այդ իրադարձությունները տեղի ունենում և ո՞ւմ հայեցակետից է պատմվում տեքստը:

Այս համատեքստում օրորոցային տեքստը կարելի է համարել որպես պատմամային /narrative text/: Պատումը ենթադրում է որոշ փոխհարաբերություններ տարբեր մարդկանց, իրադարձությունների մեջ, ինչպես նաև ինչ կապ է հաստատվում ասողի և լսողի միջև:

Ձեք Ջայփսն առաջարկում է մի շարք չափանիշներ², որոնց օգնությամբ կարելի է տարբորոշել բանահյուսական և հեղինակային տեքստերը: Մեր խնդրո առարկայի հետ կապված կառանձնացնենք այդ ցանկում նշված մի քանի չափանիշներ, որոնք կդարձնեն մեր ուսումնասիրությունը առավել ուշագրավ և նպատակային՝ ասացող – ունկնդիր տեսանկյունից.

Բանահյուսություն /folklore/ Գրականություն /literature/

Բանավոր /oral/ գրավոր /written/

Առդեմ հաղորդակցում /face –to–face communication/ անուղղակի հաղորդակցում /indirect communication/

Անցողական /ephemeral/ հարստև /permanent/

Վերստեղծում /re-creation/ ստեղծագործություն /creation/

Տարբերակ /variation/ կրկնություն /revision/

Բանահյուսական օրորոցային տեքստը ենթադրում է օրորասաց/ ունկնդիր ներկայություն:

Բանավոր տեքստը հավանաբար առաջադրում է անցողական գործընթաց, այն վերստեղծվում է՝ դառնալով տարբերակային, ինչը չենք կարող ասել հեղինակային օրորոցային տեքստերի մասին: Վերստեղծման գործընթացը իրականացնում են ավանդական օրորասացները, քանի որ նրանք ունեն առավել հուզական հոգեվիճակ երեխային օրոր երգելիս, նրբորեն են ներկայացնում իրենց ասելիքը՝ օրորոցային տեքստը ամեն անգամ համեմելով նոր բառային միավորներով: Ավելին, ավանդական օրորասացը առավել շատ բան է ուզում ասել, պատմել երեխային: Ուսումնասիրելով ավանդական օրորասացների կողմից ասվող տեքստերը՝ նկատում ենք, որ այդ տեքստերի բառապաշարը պատկանում է հատկա-

² Zipes Jack, *Breaking the Magic Spell: Radical Theories on Folk and Fairy tales*. University of Texas Press, 1979, p. 11.

պես հուզաարտահայտչական շերտին, որը պայմանավորված է վերջիններիս տրամադրության՝ զգացմունքների ընդհանուր վիճակով: Տեքստին հուզականություն և արտահայտչականություն հաղորդելու և մանուկ ունկնդրին այդ ամբողջը փոխանցելու համար մայր օրորասացն ընտրում է *փաղաքշական, նվագական*, երբեմն էլ *չափազանցական* բառային միավորներ: Նշենք այն դիմելաձևերը, որոնք ուղղված են մանուկ հասցեատիրոջը՝ քաղված անգլալեզու և հայ օրորոցային տեքստերի բառանյութից. /*My Bonnie, my own child, my lamb; գառս, ձագուկս, գանձս և այլն*/: Հայերեն օրորոցային տեքստերում բազմաթիվ են նվագափաղաքշական բառերը, հատկապես երեխայի մարմնի անդամներին տրվող փաղաքուշ անվանումները՝ *աչիկ, բղիկ, երեսիկ, թաթիկ, թաթօն, տոտիկ, փորիկ, քիթիկ*: Բազմաթիվ օրորոցային տեքստերում մայրը աստիճանավորման ոճական բանաձևման դիմում իր երեխային կոչելով մի դեպքում՝ *Իմ հոգուս հոգին, մյուս դեպքում՝ փաշա, դրոշա, բալա ջան*:

Օրորասացը իր զգացմունքային, ներքին աշխարհից լեզվաշխարհ է թափանցում նոր բառեր, բառային միավորներ, ահավասիկ՝

- Օրո՛ր, *իմ ատլաս ու խաս...*
- Օրո՛ր, *գառն իկ, օրո՛ր..*
- Նանար ասեմ *բայիկիս,*
- Քունը տանի *ջանիկիս:*

Քանի որ օրորոցային տեքստ ստեղծողը /producer/ հատկապես երեխայի մայրն է, հետևաբար հարկ ենք համարում հակիրճ ներկայացնել և բնութագրել ասացող մորը տրվող անվանումները՝ ըստ բառարանային վկայությունների.

Երեխայախնամ, երեխատած, երեխամայր, ծծմայր, ծննդկան, ծոցվոր, ճճմամ, ճճմայր, մամա, մամե, մանկաբեր, մանկագործ, մանկախնամ, մանկածու, մանկամայր, մանկապահ, մանկապահպան, մանկատած, օրորոցկան:

Հետաքրքրական է *օրորոցկան*³ բառի սահմանումը բացատրական բառարաններում: Այն ունի թե՛ օրորոցում քնած երեխայի և թե՛ օրորոցի մեջ զավակ ունեցող կնոջ իմաստները: Ենթադրաբար բառային մակարդակում մոր և մանուկի նույնացման մասին է խոսքը:

Նշենք նաև այն, որ տեքստերում առկա են երեխային ծնող, հոգ տանող մորը տրվող գեղարվեստական բազմաթիվ բնորոշումներ, որոնք տեքստը դարձնում են ավելի հուզական և լսելի (մամուլ, մամուլիկ):

Պատահական չէ, որ առաջին խմբում են գտնվում մայր օրորասացները: Օրորները մեծ մասամբ ստեղծում և կատարում են մայրերը: Կոմիտասը կանանց կատարումներին մեծ նշանակություն է տալիս. նա գտնում է, որ ընտանիքի բարքերն ու սովորույթները պահպանողները կանայք են, որ նրանց միջոցով է ազգային ոգին անցնում սերնդեսերունդ⁴:

³ Հայոց լեզուի նոր բառարան, Գնել Արքեպս. Ճերեճեան, Փարամազ Կ.Տոնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան: Կ.Տոնիկեան եւ Որդիք հրատարակչատուն, հ.2, Պէյրուք, 1992, էջ 1159:

⁴ Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Գեղջկական երգ, Եր., 2004, էջ 202:

Օրորասաց մոր կերպարը բոլոր դեպքերում ակտիվ է, ներգործող, քանի որ որոշակի ուղղվածություն ունեն նրա թե՛ խոսքը, թե՛ դիրքորոշումը: Բնականաբար ունկնդիր երեխան գտնվում է հայեցողական, կրավորական վիճակում:

Անգլալեզու և հայ օրորների տեքստերում հաճախ ենք հանդիպում *Mother's arms, թևս դեմ բերեմ, մոր ձեռքեր կամ թևեր, մոր կուրծք* արտահայտություններին, որոնք գործողություն կատարողներն են: Հրեշտակի թևերի պես դրանք պահպանում են երեխային, ապահովում նրա անդորրը: Առանձին օրինակներում օրորասացը, ի մասնավորի մայրը, հանդես է գալիս որպես փոխանուն. երբ մասն ընկալվում է ամբողջի տեղ (*ոչ թե մայրն է, այլ մոր ձեռքը, կամ մոր կուրծքը*):

Lullaby, deep in the clover
Drone the bees softly to rest;
Close white lids your dear eyes over,
Mother's arms shall be your rest.
Lullaby, whisper and sigh,
Lullaby, lullaby⁵.

Օրոր, օրոր օրերուդ,
Թևս դեմ բերեմ չարերուդ,
Չարխափան չարերդ խափանի,
Աստվածամայրն արևդ պահի⁶:

Օրորասաց մոր կերպարը կարևորվում է նաև դարձվածքային մտածողության մակարդակում. *Mummy's boy (mother's boy/mama's boy, tied to your mother's apron strings)*, *մայրիկի բալա, մամայի տղա(աղջիկ), մոր փեշի տակ մեծցած, մոր պահած* արտահայտությունները:

Օրորասաց մոր կերպարը առավել ցայտուն է արտահայտվում հուշ-օրորոցային տեքստերում: Հուշ-օրորոցայիններում «կերպարային» նկատելի շեղում կա, կիզակետը մայրն է, թեև պարբերաբար կրկնվում են *օրոր, քնիր* բառերը՝ ասես հիշեցնելով, որ նպատակը երեխային քնեցնելն է: Ջավակը կարծես դառնում է այն նվիրական անձը, որին մայրը հաղորդակից է դարձնում իրեն հուզող խնդրին, պատմում է իր պատմությունը կամ դրվագներ երեխայի հոր կյանքից...

Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա՛ ջան,
Որ քեզ հայր նա կոչվում էր, օրոր, օրոր, բալա՛ ջան:
Առավոտյան ժամը յոթին, բալա՛ ջան,
Պատերազմում հայրդ սպանվեց, օրոր, օրոր, բալա՛ ջան:
Վրե՛ժ, վրե՛ժ, չար ոսոխից, բալա՛ ջան,
*Խտնաստրը քեզ կանչում է, օրոր, օրոր բալա՛ ջան!*⁷

Մայրը վկայաբերում է ցավոտ ու վշտալի հիշողություններ, որը ինչ-որ չափով կարելի է համարել նաև տեղեկատվական գործառույթ ունեցող օրորոցային: Ստորև բերում ենք այլ օրինակներ.

⁵ <http://www.musingsbylizzytish.com/otm/LullabiesAndDreams.html>).

⁶ **Գրիգորյան Ռ.**, *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր*, Եր., 1970, էջ 55:

⁷ *Հայ ժողովրդական ռավի և զինվորի երգեր*, Աշխատասիրությանը Ա.Ս. Ղազիյանի, Եր., 1989, էջ 127:

*Daddy shot a bear,
Daddy shot a bear,
Shot him through the keyhole-
An' never touch a hair⁸.*

Այսօրինակ օրորները նպատակ ունեն տղա երեխայի մեջ սերմանելու այրական սկիզբ՝ դժվարին իրավիճակներում դրսևորվող ուժ, խիզախություն:

Օրորոցի շուրջ ծավալվող իրավիճակը հնարավորություն է տալիս մորը պատմելու մանկիկին այն ամենի մասին, ինչը չէր կարող ասել այլ պայմաններում մեկ ուրիշին:

*Baloo, my boy, lie still and sleep
It grieves me sore to hear thee weep
If thou'lt be silent I'll be glad
Thy moaning makes my heart full sad.
Baloo, my boy, thy mother's joy
Thy father bred me great annoy
Baloo, baloo, baloo, baloo,
Baloo, baloo, lu—li-li-lu.⁹*

Հաճախ հուշ-օրորոցայինները ունեն հստակ թեմատիկ-գործառույթային տրոհում. երկու տող – բուն քնաբեր տեքստ, երկու տող հուշերգություն, որը մանկան քնելու հետ առանձնապես չի առնչվում:

Ավանդական է նաև օրորասաց մեծ մոր երգած օրորոցային տեքստը.

*Նենի ըսիմ, քնցնիմ որդի, նենի, նենի, նենի, նենի,
Անուշ քնեն, թոցնիմ որդի, նենի, նենի, նենի:
Դնիմ զավակս, օրոր անեմ
Որդի, օրոր, օրոր, օրոր, օրոր...
Պագնիմ անուշ բերանը, որդի, օրոր, օրոր,
Օրոր...*

Առանձին օրորներում որպես օրորասաց կարող է հանդես գալ հայրը:

Հետևյալ տեքստը՝ «Հոր օրորը», մորը կորցրած երեխայի համար երգում է հայրը՝ ունենալով այն գիտակցումը, որ ինքը չի կարող մոր նման լավ երգել իր զավակի համար: Նման օրինակները բավականին սուղ են, սակայն օրինակների սղությունը չի կարող պատճառ հանդիսանալ դրանք անտեսելու համար, հետևաբար մեջ ենք բերում հրեական օրորերգի անգլալեզու տարբերակը:

*Through some wild, deserted stretch
The wind is howling like a bitch,
For mother's breast a baby weeps
Until in father's arms he sleeps.
So the father lulls his babe*

⁸ *Our Singing Country, Folk Songs and Ballads Collected and Compiled by John A. Lomax and Alan Lomax, Courier Dover Publications, 1941, p.95.*

⁹ <http://www.contemplator.com/ireland/dromore.htm>

With a ballad of the grave

Other Jews around him shudder.¹⁰

Օրորների տեքստերում երբեմն կերպավորվում են նաև ընտանիքի համեմատաբար հասուն երեխաները, որոնք միջավայր են ստեղծում, լրացնում են հոգեբանական ապրում-պատկերը: Այսպես՝

Sleep like a lady(or gentleman)

You shall have milk

When the cows come home

Father is the butcher

Mother cooks the meat

Johnnie rocks the cradle

While baby goes to sleep¹¹.

Ենթադրաբար այս օրինակում ընտանիքի մեկ այլ երեխա՝ Ջոնին է համարում ներընտանեկան միջավայրը:

Այսպիսով, յուրաքանչյուր օրորասաց առանձնանում է իր պատմելաձևով, ասելիքով: Լեզվական իրականությունը (օրորոցայինների տեքստերը) համապատասխանաբար արտահայտում է այն մտացածինը, որը միշտ արտաքն կարգի է, առօրեական ռիթմից դուրս և մոտենում է օրորասացի՝ զավակի հանդեպ ունեցած զգացողության բացառիկ դրսևորմանը:

ОБРАЗ СКАЗИТЕЛЯ В АНГЛОЯЗЫЧНЫХ И АРМЯНСКИХ ФОЛЬКЛОРНЫХ КОЛЫБЕЛЬНЫХ ТЕКСТАХ

____ *Резюме* _____

____ *А. Матикян* _____

Тексты колыбельных песен создаются и передаются устно, поэтому фольклорный материал обращается и разворачивается в рамках общения сказитель-слушатель. Каждый сказитель колыбельной песни может по своему обращаться к одному и тому же тексту колыбельной песни. Для соответствующего представления сказителя колыбельной песни мы сочли необходимым группировку и упоминание традиционности и не традиционности последних.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մատիկյան Հասմիկ Համլետի – ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն,

E-mail:hasvrej@mail.ru

¹⁰ *Kramer A. Lishinsky S. The Last Lullaby: Poetry from the Holocaust. Syracuse University Press, 1999, p. 46.*

¹¹ *Simpson J. and Roud St. A Dictionary of English Folklore, Oxford University Press, 2000.*